


ՏԵՂԵԿԱԳԻՐ
ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԻ
Ի ՎԵՐԱՅ ԵԼՄՏԱՑՈՅՅԻ
1886-87 ԵՒ 1887-88 ԱՄԱՅ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Մ Ա Տ Ո Ւ Յ Ե Ա Լ

Ա. Ռ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ

Ի 43 ՅՈՒՆԻՍԻ 1886



Կ. ՊՈԼԻՄ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐՋԵԱՆ

1886

Վասմապատիւ Ատենապետ Եֆէնոտի

Ազգային Երևականական Պատկառելի Ժողովը ,

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅՈՒԹ ԾԱՇԽԱՄԱՐԴՈՒՅ

ՀԱՅՈՒԹ ԱԿՏՈՒԱ

ՏՐԻ 1881 ՀՅ 1881

ՀԱՅՈՒԹ ՅՈՒԹՈՒԹ ՄԱՍՆԱ

1.0.0.1.0.0.0.0

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅՈՒԹ ԾԱՇԽԱՄԱՐԴՈՒՅ

1.0.0.1.0.0.0.0



29. 55

ՀՅ 97

Ազգային Վարչութեան Քաղաքական
Ժողովը կողմանէ 1886-87 և 87-88 տա-
րիներու համար ծրագրեալ Ելմտացոյցն ,
հանդերձ տեղեկագրով , Համարակալու-
թեան Դիւանիո յղուած էր առ ի քըն-
նութիւն և ի տեղեկագրութիւն տասնե-
հինգ աւուր պայմանաժամաւ :

Թէպէտե խնդրոյն սահմաղութիւնը
Դիւանիո ծանօթ էր , սակայն իւր անդամոց
միոյն բացակայութիւնն և միւսին անձ-
նական զբաղմունքն պատճառ եղան որ ,
հակառակ իւր փափաքանաց և Փողովայդ-
որոշման , չկրցաւ պայմանաժամին Պատկ.
Փողովայդ նկատառման ներկայել իւր
քննութեան արդիւնքն : Ուստի այս ակա-
մայ յապարման համար Ժողովոյդ ներո-
զամառութիւնը խնդրելով կ'անցնինք բուն
իսկ Ելմտացոյցի քննութեան :

Դիւանս իրեն յանձնուած պաշտօնը
խզի մոռք կատարելու համար քանից ս
ի ժողով գումարած և մի քանի անդամ
ալ Ազգ . Պատրիարքարան դիմած է տես-
րակներն աչքէ անցնելու և սնցեալ տար-
ուան գոյացեալ հասութից որքանութիւնն
հաստատելու և բաղդատութիւնն ընելու
համար :

Նախ պէտք է յայտաբարենք թէ
այս տարուան Ելմտացոյցին մէջ Ապրի
Քաղաքական Ժողովը նոյնութեամբ Հա-
սութից կողմն անցուցած է նշանուու-
թեան և Անցագրատան հասոյթներն ի-
շենց ամբողջութեամբ , և ծախուց գը-
լուխն անցուցած է այս հասութից մէ-

ջն Ազգ . Հիւանդանոցի վճարեալ նը-
պաստը : Նորութիւն և միանդամայն
հաշուական ծշութիւն մ'է այս գործու-
թիւն , որ անշուշտ պիտի շարունակուի
ապագայ Ելմտացոյցներու մէջ : Հարկ
է որ ամեն ազգային գիտնայ թէ Ազգ .
Պատրիարքարանն , հակառակ իւր գըրա-
մական անձկութեան և երբէք չի մոռնար
Ազգային Հիւանդանոցի նպաստը կանո-
նաւորապէս վճարել :

ՀԱՌՈՅՑԹԻՔ

Այս գլուխոյն մէջ տեսնուած գումար-
ներու մեծագոյն մասն արդէն նախորդ
փակեալ ըրմանի մէջ իրականացած լինե-
լով՝ հարկաւոր կը նկատենք անփոփոխ
պահել զայնս :

Ազգային Ժողովոյ կողմանէ անցեալ
տարի քուէարկեալ օրինաց տրամադրու-
թեամբ , ազգային տուրք վճարող անձանց
որքանութիւնն և հետեւաբար դանձուե-
միք գումարն որոշուած լինելով , նոյն իսկ
թաղական Խորհրդոց օժանդակութեամբ
պատրաստուած ցանկերու համաձայն ,
կ'առաջարկենք նոյնութեամբ ընդունիլ
Ելմտացոյցին մէջ նշանակեալ ազգային
արոյ գումարն որ է 374,473 զըուշ : Եթէ
մէկ կողմէ Ազգային Վարչութիւնն ամեն
չանք ի գործ դնէ , ինչպէս կ'ընէ արդէն ,
ժամանակին դանձելու համար այս պար-
տաւորիչ տուրքն , և եթէ միւս կողմէ
ազգայինք փութան իրենց այս նուիրա-

կան պարտականութիւնները կատարել, դիւանս համոզուած է թէ գիւրութեամբ կարելի է ձեռք բերել վերոյնշանակեալ գումարին գանձումն : Այսօր ամեն չայ ճանչած է Պատրիարքութեան և Պատրիարքարանի մեծ նշանակութիւնն : Այս գարաւոր հաստատութիւն չկրնար ժամանակիս պահանջմանց համաձայն գոհացում տալ աղդային բաղմաղան պէտքերուն, եթէ Աղդը չդիմանայ նիւթապէս բարելաւ վիճակի մէջ դնել Աղդային Պատրիարքարանն, որմէ կախեալ է Աղդին գարաւոր իրաւանց պահպանութիւն :

Նոյնպէս կ'առաջարկենք նոյնութեամբ պահել գաւառական Մուգամայի համար նշանակեալ գումարն որ է 110,630 զրչ : Իրաւ է որ անցեալ տարիներու մէջ այս գումարը չէ կրցած իրաշկանանալ, բայց որովհետեւ Պատրիարք և Վարչութիւն այս տարի աղդուապէս կը պահանջեն և պէտք է որ պահանջեն իրաքանչիւր գաւառէ իրեն ինկած ջընջին գումարաց վճարումն, և միւս կողմէ նկատելով որ գաւառք սկսած են հետզհետէ ըմբռնել և ճանչնալ իրենց պարտականութիւնն առ կեդրոնական իշխանութիւնն՝ ոյր աղդեցիկ և զորաւոր լինելէն կախեալ է գաւառացի աղդայնոց գործոց կարգադրութիւնը, Դիւանս կը կարծէ թէ յետ այսորիկ կարելի պիտի լինի նոյնութեամբ գանձել Ելմտացոյցին մէջ նշանակեալ գումարը :

ԾԱԽԱԲ

Այս տարուան Ելմտացոյցի մէջ ծախուց կողմը նշանակեալ գումարները, բաղդատմամբ անցեալ տարւոյ, հետա-

դայ փոփոխութիւնները կրած են, ի բաց առեալ այն թիւերն որք նոյնը մնացած են :

	85-86	86-87
Պրական պիտոյք	3,500	8,000
Թղթատար և կեռաղեր	8,000	40,000
Տպագրութիւն	7,000	8,000
Աղդային ֆողով	18,000	15,000
Յարաբերութեան ծախք	15,000	14,000
Նալատ կարօտելոց	3,000	4,000
Նշանառուքի խաչ	3,000	3,500
Փայտ և ածուխ	6,000	5,000
Կարասի և նորոգութիւն	3,000	10,000
Հանդերձագին	4,000	5,500
Ծախք մանունք	3,000	6,000
Ծախք պատահականք	14,600	7,000
Գաւառ + այցելութիւնք	22,500	24,000
Գաստիարակութ + պէտք	22,500	24,000
Պաշտօնէութիւն	180,000	241,800

Ինչպէս կը տեսնուի այս բաղդատական ցուցակէն, եղած յաւելմանց և նուաղմանց մէջ մեր ուշադրութիւնը գըրաւող միայն երկու ծախքեր կան, որոց վրայ մասնաւորապէս պիտի խօսինք : Խոկ գալով միւս ծախուց, կ'առաջարկենք Պատկ . Փողովոյդ նոյնութեամբ վաւերացնել զայնս, ինչպէս նաև այն գումարն որք նոյն են անցեալ տարւոյ Ելմտացոյցին հետ :

Առաջին կարեոր յաւելումն եղած է Ակարասի և նորոգութեան ծախուց գումարին վրայ, որ 3,000 է 10,000 զըրուցի բարձրացած է : Թէև այս գումար բաւական չէ Պատրիարքարանը վայելուչ վիճակի մէջ դնելու, բայց առ այժմ հարկ կայ այսչափ զոհողութիւն մ'ընել այս տարի, բատ որում այդ շնչքն, ինչպէս ամենուդ յայտնի է խարիսուլ և հինցած վիճակի մէջ կը դտնուի :

Այս առթիւ աւելորդ չենք համարիր յիշեցնել ֆողովոյդ թէ ո՛չչափ հարկ անհրաժեշտ է գտնել միջոց մը որով կարելի լինի Պատրիարքարանը վերաշնել ըստ արդի պահանջմանց և գնել զայն այնպիսի գրութեան մը մէջ որ գոհացընէ մեր աղդային արժանապատութիւնն : Ասկէ կէս գար առաջ թերեւ թերեւ այս տեսակ չէնք մը բաւական ըլլար, բայց այսօր որ Պատրիարքարանը կ'ընդունի բարձրաստիճան հիւրերու այցեւութիւնը և աղդային մէջ գոյզն վճարումներ եղած են, եթէ այս տարուան քուէարկելի Ելմտացոյցին և այս կարդի ծախքերը չպիտի կրնան վրճարուիլ անցեալ տարուան նման, մեր կարծեօք աւելորդ է պահել զայնս ներկայի ներքին ներկայի վիճակին մէջ մնայ կը կրնան այժմէն չապահովէ զմեղ այս վճարմանց մասին :

Ամենէն կարեոր յաւելումն Ելմտացոյցի ծախուց կողմը կը առանուի պաշտօնէից ամսականաց գումարին վրայ, որ բարձրացած է այս տարի 244,800 զրչ :

Նկատելով որ Վարչութիւնը ձեռնարկած է կազմակերպել, ինչպէս կը տեսնուի իւր աեղեկագրէն, Պատրիարքարանի ներքին վիճակին և առ այդ 50,000 զրուշի յաւելուածական վարկ մը կը պահանջէ, զոր պիտի գործածէ երբ նոյնչափ գումարի առաւելութիւն մը տեսնէ չասութից վրայ, նկատելով որ Վարչութեան այս ձեռնարկն արժանի է ամեն քաջալերանաց, Դիւանս կը կարծէ Փողովոյդ կարծեաց թարգման կանգնիլ յանձնարարելով նմա վերոյգրեալ գումարին վաւերացումը :

Այս առթիւ հարկ կը համարինք յանձնարարել Վարչութեան որ Պատրիարքարանի կազմակերպութեան ձեռնարկ պահուն չմոռնայ նաև կարգել օտար լեզուաց հմուտ պաշաննայ մը, որոյ պէտքն յոյժ զգալի է ամեն տեսակտով :

Ծախուց մասին մեր գիտողութիւնները վերջացնելէ առաջ, կը փափաքինք քանի մը խօսք ըսել գաւառական այցեւութեանց և Պատրիարքակութեան համար նշանակեալ գումարներուն վրայ : Այս տարի այս երկու կարգի ծախուց իւրաքանչիւրին գումարը բարձրացած է 24,000 զրչի, մինչդեռ անցեալ տարի 22,500 էր : Մեր ստացած տեղեկութեանց նայելով անցեալ տարի քուէարկեալ այս երկու տեսակ ծախուց ի հաշիւ խիստ գոյզն վճարումներ եղած են, եթէ այս տարուան քուէարկելի Ելմտացոյցին և այս կարդի ծախքերը չպիտի կրնան վրճարուիլ անցեալ տարուան նման, մեր կարծեօք աւելորդ է պահել զայնս ներկայի ներքին վարչութիւնն մէջ, եթէ Աղդային Վարչութիւնն այժմէն չապահովէ զմեղ այս վճարմանց մասին :

Ուելորդ կը համարինք աստ այս երկու կարեսորագոյն ծախուց ստիպողականութեան մասին խօսիլ, վասնզի շատու շատ անգամներ գրութեան ծախուց և իսուուածէ ագոնց վրայ . այլ միայն հարկ կը գոն գոնց վրայ . այլ միայն հարկ կը գոնց գոնց յիշեցնել թէ դաւառք հովիւներու պէտք ունին, և թէ կ . Պոլսոյ և դաւառաց վարժարանք, զուրկ կերպունական անմիջական հսկողութեանէ, կը կառուպուին առանց առանց որոշ նպատակի և ուղղութեան : Ժամ է որ կրթական խընդրոյն տանք հարկ եղած կարեւորութիւնն և ստիպողութիւնն, վասնզի չունինք այս խնդրէն մեծ և կենսական խնդիր :

Ելմտացոյցի չասութից և Ծախուց գլուխներու մասին Դիւանս իւր կարծիքը յայտնելէ յետոյ կ'անցնի քանի մը ընդհանուր նկատողութիւններ պարզել Պատկ . Փողովոյդ :

Քաղաքական Ժողովն իւր տեղեկա-
գրով կը պահանջէ Պատկ . Ժողովեղ որ
Ներկայացեալ Ելմտացոյցը քուորիէ եր.
կու տարուան , այսինքն 86-87 և 87-88
տարիներու համար : Այս առաջարկու-
թիւն լուրջ նկատողութեան առնուելով՝
անընդունելի գատուեցաւ Գիւանիս հօդ-
մանէ , որպիշտու նախ պատճառ մը չկայ
այսպիսի նորութիւն մը մացնելու մեր
խորհրդարանական սովորութեանց մէջ .
Երկրորդ՝ հարկ չենք ահաներ այժմէն
կապել յառաջիկային գալիք Վարչու-
թեան մը ձեռքերն : Արդէն Վարչութեան
Վաեմ . Առենապետ է ֆէնտին յայտարա-
րած է Գիւանիս անգամներէն միայն թէ
չպնդեր Ելմտացոյցի մէկ և կամ երկու

տարուան լինելուն կամ մինելուն վրայ ,
հետեաբար Թիւանս կառաջարկէ քուէ-
արկել ներկայ Ելմտացոյցը մէկ տարուան
համար միայն :

Սահմանադրութեան սկզբնաւորութեան մինչև ցայսօր՝ այս վերջին տարիներու մէջ միայն Ազգ . Փողովոյն ներկայացուած են Պատրիարքարանի Ելմը տացոյներն առ ի քննութիւն և ի վա-

ւերացումն : Կարծենք այս տօրուան Ել-
մտացոյցն առաջինն է որ ըստ Սահմա-
նադրութեան կը ներկայաժմայ մեր տա-
րեկան նստաշրջանին սկիզբը : Գոհունա-
կութեան արժանի է այս պարագայն, որ

Գ. — Կ'ոռաջարկենք նմանապէս որ
Քաղաքական ժողովս Ելմտացոյցը պատ-
րաստելու առեն, անդ նշանակէ այն թք-
ւանշանները զորս պիտի գտնէ փակելի
ընձնի առաջին վեցամյաց հասութից և
ծախուց գումարներուն մրաւ սպառելու

Քաղաքացիության կը վահեալ չքչանի վերջին վեցամսեայ համը Եփամագության մէջ ուշադրութեան ներկաւ սութից և ծախուց զամարները :

յելու սա անտեղութիւնը թէ՝ Ելմացոյցք
ո՞ր շրջանի որ կը վերաբերին, կամ այն
շրջանի մէկ քանի ամիսներն անցնելէ յեւ-
տոյ և կամ նոյն շրջանի սկիզբը կը ներ-
կայանան Փողովիս վաւերացման, որով
մեր հսկողութեան իրաւունքը կը կոր-
ունցնէ իւր նշանակութիւնն և կարեռ-
րութիւնն, վասն զի այդ ժամանակամի-
ջոցի մէջ Պատրիարքացմանը կը շարունա-
կէ իւր գանձումներն և ծախքերն ընել
առանց Փողովայս վաւերացման։ Այս
անտեղութիւնը բաւնալու և Փողովայս
հսկողութեան իրաւունքն իրական ընել-
լու նպատակաւ, Դիւանո յետ խորհրդ-
դակցութեան հետեւալը կ'ենթարկէ
Պատկ։ Փողովայդ վաւերացման։

Ա. — Որովհետեւ մեր բոլոր վարչական ընտրութիւնք Մայիս 1ին տեղի կունենան, և Հարկ է որ նոր ընտրեալ վարչութիւնք ժամանակ ունենան ուսումնառիւնելու գործեցն և ըստ այնու ելքատացոյց պատրաստելու, ուստի կառաջարկենք որ Պատրիարքարանի դրամական տարեգումին սկսի Նոյեմբեր, 1ին, փոխանակեալ Մայիս 1ին :

Բ . — Կ'առաջարկենք նոյնպէս որ Քաղաքական Ժողովը ներկայէ Ելմտացոյցն իւրաքանչիւր տարւոյ Սեպտեմբերի 1ին և Աղդախն Ժողովը պարտաւոր լինի վաւերացնել զայն միջին ցԱ Նոյեմբեր :

Գ. — Կ'ոռաջարկենք նմանապէս որ
Քաղաքական Ժողովն Ելմտացոյցը պատ-
րաստելու ատեն, անդ նշանակէ այն թը-
ւանշանները զորս պիտի գտնէ փակելի
չըջանի առաջին վեցամսեայ հասութից և
ծախուց գումարներուն վրայ բարդելով
փակեալ չըջանի վերջին վեցամսեայ հա-
սութից և ծախուց գումարները :

Եթէ Պատկ . Ժողովդ ընդունի մեր
այս երեք առաջարկութիւնները , միան
դամ ընդ միշտ կանոնաբաժն կը լինի Ել-
մտացոյցի պատրաստութեան և ներկայաց
ման գործողութիւնը :

Պատկ . Ժողովդ գիտէնաև թէ մեր
Ելմտացոյցը այն ատեն միայն կունենան
իրենց նշանակութիւնն երբ Ժողովը պա-
հանջող կը լինի նոցա անթերի գործադ-
րութեան . Աւսոմի կ'առաջարկենք յահճ
նարարել Վարչութեան որ քուէարկեալ
Ելմտացոյցը ճշգիւ և անթերի գործադ-
րէ , և թէ Ժողովս պատասխանառու կը

ճանչէ այն Վարչութիւններն որ նշանակ-
եալ գումարներէ աւելի դրամ՝ կը ծախ-
սեն : Սոյնպէս Փողովս պէտք է պահան-
ջէ որ Վարչութիւնք ժամանակին մեզ
ներկայեն Պատրիարքարանի տարեկան
փակեալ Հաշուեցոյցն, որպէս զի Փողո-
վըս գիտնայ թէ որքան ճշդութեամբ
գործադրուած է իւր կազմէ քուէարկեալ
Ելմառացոյցը :

Եղբակացնելով մեր Տեղեկագիրը՝
կ'առաջարկենք վաւերացնել վերոյիշեալ
դիտողութիւններով՝ 1886-87 տարւոյ
Ելմասացոյցը նոյնութեամբ։

Ա. աւելացնելով Համարակալութեան դիմումը

Գ. 3. Յովակիմեան

13 *Bulletin* 1886

LJ. 190, 111

St. John's

Կ. Պ. Սրբաճեա

יְהוָה



ՀՀ Ազգային գրադարան



NL0247862

ՀՀ Ազգային գրադարան



NL0247861

ՀՀ Ազգային գրադարան



NL0247772

